ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ XVII ԴԱՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

XV դարի կեսերից միջազգային առևտուրը ստացավ մինչ այդ աննախընթաց ներքին մղում։ Եթե միջնադարյան առևտրի խնդիրն ու կոչումն էր լոկ հասարակության բարձր խավերի պահանջարկի բավարարումը պերճանքի առարկաներով, ապա նշված ժամանակաշրջանից սկսած սկիզբ է դրվում միջազգային առևտրի այսպես կոչված «ժամանակակից» ձևին, որն առավելապես հետևանք էր եվրոպական տնտեսության բուռն զարգացման։ Արևմուտքում արհեստներն ու գյուղատնտեսությունը արդեն անցել էին ապրանքային արտադրությանը, որը բնակչության արագ աճի պայմաններում անգամ ժողովրդական սպառման համար ապահովում էր ավելի մեծ քանակությամբ ապրանքներ։ Եվրոպական զարգացող արդյունաբերությունը, բնականաբար, հարաճուն կերպով զգում էր հումքի պահանջ, որի մի զգալի մասը ապահովվում էր Արևելքից բերված հում մետաքսի, բամբակի, բուսական ներկերի, բուսախեժերի և բազմապիսի այլ հումքատեսակների հաշվին։ Բացի այդ, Եվրոպայում կապիտալիզմի բուռն զարգացումը վաճառահանման մշտական արտաքին շուկաներ ապահովելու պահանջ էր առաջադրում։ Ահա այս հանգամանքներն էլ կապիտալիստական զարգացման ուղին թևակոխած երկրների անդրծովյան նվաճողականության սկզբնավորման պատճառ հանդիսացան։

Հայտնի է, որ դեռևս վաղ միջնադարից Արևմտյան Եվրոպայի երկրները Միջերկրական և Սև ծովերի վրայով առևտրական կապերի մեջ էին գտնվում Արևելքի երկրների հետ։ Սակայն 1453 թ. թուրք-օսմանների կողմից Կ. Պոլիսը գրավելուց հետո այդ ուղին խափանվել էր։ Փակվել էր նաև այսպես կոչված «մետաքսի ճանապարհը», առևտրական այն մեծ մայրուղին, որը Միջին Ասիայից և Իրանից, Հայաստանի վրայով տանում էր դեպի Սև ծովը։ Դա այն ուղին էր, որի վրայով Եվրոպան ստանում էր մետաքս և մետաքսի հումք։ «Մյուս ճանապարհը, որ կոչվում էր համեմների ճանապարհ և գալիս էր ծովով Հընդկաստանից մինչև Եգիպտոս, վտանգվեց դարձյալ նույն թուրքերի տիրապետությամբ, որ հաստատվեց Եգիպտոսում»[1]։

Այդ պատճառով Վենետիկը, որին պատկանում էր Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Հնդկաստանի ու Չինաստանի հետ առևտրի առաջնությունը, պարբերաբար պատերազմներ էր մղում օսմանյան Թուրքիայի դեմ, ապարդյուն ջանքեր թափելով «վերականգնելու Մերձավոր Արևելքում կորցրած իր կշիռը և կասեցնելու Միջերկրականի վրայով տեղի ունեցող առևտրի ճակատագրական վայրէջքը»[2]։

Օսմանյան պետության զավթումները և Եվրոպան Արևելքի հետ կապող ուղու խափանումը արագացրին Հնդկաստան տանող ծովային ճանապարհի որոնումները։ Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, որոնք «մինչ այդ լսված զարկ տվին առևտրին, ծովագնացությանը, արդյունաբերությանը»[3], նշանավորում էին էական տեղաշարժեր նաև միջազգային առևտրի ու առևտրական գլխավոր մայրուղիների մեջ։ Առևտրական ճանապարհները Միջ-

---

1 Լեռ. Երկերի ժողովածու. հ. 3, Երևան, 1969, էջ 8։

2 Աշ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք Բ, Երևան, 1959, էջ 56, 57։

3 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս. Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 139։

երկրական ծովից աստիճանաբար տեղափոխվեցին Ատլանտյան, Հնդկական և հետագայում նաև խաղաղ օվկիանոսները։ Միջերկրական ծովը կորցրեց գլխավոր առևտրական ճանապարհի նշանակությունը, որը նա ուներ հին ժամանակներում և միջին դարերում։

Սակայն դա չի նշանակում, թե միջերկրածովյան առևտուրը խսպառ դադարեց։ Նրա պահպանմանը առաջին հերթին նպաստում էր Օսմանյան կայսրության աճող շահագրգռվածությունը[4]։ Պատահական չէ, որ թեև Ֆ. Էնգելսի բնորոշմամբ թուրքերի առևտուր անելու մեթոդը կարավաններ թալանելն էր[5], սակայն Թուրքիայի վրայով անցնող կարավանների շարժումը չէր դադարում նույնիսկ պատերազմների ժամանակ[6]։ Օսմանյան կայսրությունը ձգտում էր իր բաժինը ստանալ ոչ միայն իրանական հում մետաքսի առևտրից, այլև կենտրոնական Ասիայի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ իրագործվող առևտրափոխանակությունից[7]։ Հենց այդ պատճառով թուրքերը մշտարթուն հսկում էին դեպի արևմուտք տանող կարավանային ճանապարհների վրա։

Չպետք է անտեսել նաև այն իրողությունը, որ ցանկացած եվրոպական երկրից ճանապարհը Միջերկրական ծովով դեպի Մերձավոր Արևելք շատ ավելի կարճ էր ու անվտանգ, քան օվկիանոսի վրայով։ Այդ է պատճառը, որ եվրոպական երկրները Մերձավոր ու Միջին Արևելքի հետ առևտուրն իրականացնում էին արևելյան միջերկրածովյան ավազանի առևտրական կենտրոններում։

XVI դարից սկսած նկատվում է հայ առևտրական բուրժուազիայի՝ խոշոր դասի վերելք։ Միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականները սկսում են հաջողությամբ մրցակցել եվրոպական հզոր առևտրական ընկերությունների ու առևտրական բուրժուազիայի հետ ոչ միայն այն պատճառով, որ կարավանային առևտրի մենաշնորհը պատկանում էր իրենց, այլ գլխավորապես այն պատճառով, որ բավարարվում էին համեմատաբար ցածր շահույթներով, որն անընդունելի էր եվրոպական վաճառականների համար։ Բացի այդ, Հայաստանի յուրահատուկ աշխարհագրական դիրքը (Եվրոպայի և Ասիայի սահմանակետում) և այն, որ նրա վրայով անցնում էին համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհները, նրան դարձնում էին կապող օղակ Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության մեջ[8]։

Հայ առևտրական դասի վերելքին նշանակալիորեն նպաստում էր նաև մերձավորարևելյան երկու խոշորագույն պետությունների քաղաքականությունը։ Այդ առթիվ Լեոն գրում է. «Պարսկաստանն ու Թուրքիան կապված են նոր ժամանակի Եվրոպայի հետ առևտրական սերտ շահերով, որոնց շնորհիվ նրանք կամա-ակամա բռնում են այնպիսի դիրք, որ նպաստում է այդ երկու պետությունների մեջ ապրող և վաճառականական ընդունակություններով աչքի ընկնող ազգերին իրենց ներքին կյանքի մեջ շարժումներ առաջացնելու»[9]։ Ֆրանսիացի Տուրնֆորի վկայությամբ, օրինակ, Սեֆյան շահ Աբբաս I-ը հայերի նկատմամբ վարում էր կրոնական հանդուրժողականության քաղաքականություն, քանի որ նրանց քրիստոնյա լինելը հեշտացնում էր Իրանի առևտրական հարաբերությունները եվրոպական երկրների հետ[10]։

---

[4] Տե՛ս Վ. Ա. Բայբուրդյան. Հայերը և լեհանտյան առևտուրը XVII դարում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 2, էջ 104։

[5] Ф. Энгельс. Турецкий вопрос.—К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, М., 1957, с. 25.

[6] G. Berchet. La Republica di Venezia e la Persia. Torino, 1865, p. 62.

[7] H. Inalcik. The Ottoman Economic Mind and Aspects of the Ottoman Economy.—Studies in the Economic History of the Middle East. London, 1970, p. 210, 211.

[8] K. . Papazian. Merchants from Ararat. New York, 1979; С. В. Тер-Аветисян. Город Джуга. Тбилиси, 1937.

[9] Լեո. նշվ. աշխ., էջ 11։

[10] Pitton de Tournefort. Relation d'un voyage du Levant. T. 2, Paris, 1718, p. 158.

Արևմտյան Եվրոպայում հայ վաճառականները բնավ նորելուկներ չէին։ Դեռևս «ծովային Հայաստանը» կամ Կիլիկիայի Հայկական թագավորությունը, որն ընդգրկվել էր համաշխարհային առևտրի մեջ, ի թիվս աֆրիկյան և ասիական երկրների, առևտրական լայն կապեր ուներ նաև եվրոպական տարբեր երկրների հետ[11]։ Եթե մինչ այդ Հայաստանը մասնակցում էր միայն միջառային ցամաքային կարավանային առևտրին, ապա այժմ նա ընդգրկվում է նաև ծովային առևտրի մեջ՝ դառնալով միջերկրածովյան ապրանքափոխանակության կարևոր գործոն[12]։ Հայտնի է նույնիսկ, որ Կիլիկյան Հայաստանը որոշակի մասնակցություն է ունեցել միջազգային ծովային իրավունքի զարգացման գործում։ Նա իր շոշափելի նպաստն է բերել նաև ազատ ծովագնացության սկզբունքի հաստատմանը։

Դեռևս Կիլիկիայի հայկական թագավորության առաջին թագակիր տիրակալ Լևոն II-ը (1198—1219) 1201 թ. առևտրական պայմանագրեր է կնքում Վենետիկի և Ջենովայի քաղաք-պետությունների հետ, նրանց վաճառականներին հնարավորություն տալով ազատորեն առևտուր անել Կիլիկիայում և նրա վրայով՝ ողջ Արևելքի հետ[13]։ Միջերկրական ծովի վրայով հայ վաճառականները սերտ առևտրական հարաբերություններ ունեին նաև Ֆրանսիայի, Իսպանիայի, Հոլանդիայի, Հանզայի միության և այլ երկրների հետ[14]։

Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո (1375 թ.) հայերը երբեք չդադարեցին Միջերկրական ծովի վրայով առևտուր անել եվրոպական երկրների հետ։ Սակայն արդեն XVI դարում այդ առևտուրը նրանց թվում էր խիստ սահմանափակ և հայ առևտրական կապիտալի վերընթաց զարգացմանը զուգընթաց նրանք փնտրում էին Արևմուտքի հետ առևտրի ավելի լայն ու հուսալի շուկաներ, քան դա կարող էին ապահովել արևելյան միջերկրածովյան նավահանգիստները։

Եվրոպական տերությունների առևտրական մրցակցությունից բացի Լևանտում հայ վաճառականների գործունեությունը կաշկանդող պատճառներից մեկն էլ այդ պետությունների հյուպատոսությունների հարուցած արհեստական դժվարություններն էին։ Կատարելով իրենց երկրների առևտրական ներկայացուցչությունների դեր, նրանք արևելյան, այդ թվում նաև հայ վաճառականներին փորձում էին թելադրել Եվրոպա ներմուծվող ապրանքների գները, հաճախ բոյկոտի էին ենթարկում նրանց և այլն։ Այդ վիճակից ելք փնտրելով, մեծածախ առևտրով զբաղվող հայ խոջաները ձգտում էին իրենց ապրանքներն անմիջականորեն արտահանել Եվրոպա, որը նրանց խոստանում էր նաև ավելի բարձր շահույթներ։

XVI—XVII դդ. նավաշինության բուռն զարգացումը նպաստեց մերձավորարևելյան ու եվրոպական նավահանգիստների միջև առևտրական կապերի ընդլայնմանը և բեռների ղանգվածային տեղափոխմանը։ Վերականգնելով միջնադարյան հայ ծովային առևտրի ավանդույթները, վաճառական-խոջաները կտրում անցնում էին Միջերկրական ծովն ու Եվրոպա հասցնում արևելյան (իրանական, թուրքական, միջինասիական, հնդկական, չինական և այլն) ապրանքների բազմապիսի ու հարուստ տեսականի[15], որոնց մեջ առաջին տեղերից մեկը գրավում էր պարսկական հում մետաքսը, որի պահանջարկը մետաքսագործական արդյունաբերության բուռն զարգացման կապակցությամբ եվրոպական շուկաներում շեշտակիորեն աճել էր։

---

[11] Տե՛ս Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 461։ Տե՛ս նաև V. Langlois. Le treésor des chartes d'Armenie. Venise, 1863, p. 107.

[12] R. S. Lopez. Medieval Trade in the Mediterranean World. New York, 1955, p. 50—52, 155, 156.

[13] V. Langlois. Op. cit, p. 107.

[14] Տե՛ս Ղ. Ալիշան. Սիսական։

[15] Ղ. Ալիշան. Հայ-Վենետ. Վենետիկ, 1896, էջ 503—504։

XVI—XVII դդ. Միջերկրական ծովի ավազանում առևտրի զարգացմանը զուգընթաց մեծանում էր նաև հայ նավատերերի թիվը։ Սակայն բնականաբար նրանց տրամադրության տակ եղած նավերի թիվը չէր կարող այնքան մեծաքանակ լինել, որ ամբողջապես ապահովեր առևտրական բեռնափոխադրումների ողջ պահանջարկը։ Հետևապես հայ վաճառականները ստիպված էին լայնորեն օգտվել եվրոպական տերությունների և առաջին հերթին Անգլիայի, Ֆրանսիայի և Հոլանդիայի առևտրական նավատորմիղների ծառայություններից, մանավանդ որ դա կարող էր ապահովել ապրանքների տեղափոխման ավելի հուսալի երաշխիքներ։ Հիշենք, որ XVI—XVII դդ. ծովահենությունը անբաժան էր ծովային առևտրից։ Հատկապես Միջերկրական ծովում ծովահենությունն ընդունել էր աննախընթաց չափեր[16]։ Պետականությունից ու պետական հովանավորությունից զուրկ հայ վաճառականներն ավելի հաճախակի էին դառնում ծովահենության զոհեր[17]։ Մեզ տեղեկություն է հասել, օրինակ, այն մասին, որ ֆրանսիացի ծովահեն Անրի դ'Անգլյուր դե Բուրլեմոնը 1649 թ. Միջերկրական ծովում զավթել է հայ նավատեր Անտոն Պողոսին պատկանող «Հայաստանի վաճառական» («Մերկանտե Արմենո») կոչված նավը[18]։ Նման հարձակումների հետևանքով ունեզրկվում ու սնանկանում էին ոչ միայն առանձին վաճառականներ, այլև ամբողջ առևտրական տներ։

Տվյալներ կան նաև այն մասին, որ եվրոպական տերությունները որոշակի վարձատրության դիմաց հայ նավատերերի նավերին ուղեկցելու համար տրամադրում էին ռազմանավեր։ Ընդ որում խոշորները ավելի հաճախակի օգտվում էին հոլանդական մարտանավերի նմանօրինակ ծառայություններից[19]։

Եթե մինչև XVII դարի առաջին կեսը Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականների առևտրական գործառնությունների մեծագույն մասը կատարվում էր Լևանտի առևտրական կենտրոններում, ապա դարի երկրորդ կեսին որոշակի միտում էր նկատվում առևտուրը եվրոպական շուկաներ տեղափոխելու և տեղական առևտրական բուրժուազիայի հետ անմիջական կապերի մեջ մտնելու ուղղությամբ։ Դա հատկապես ավելի շեշտված բնույթ ընդունեց այն բանից հետո, երբ 1676 թ. ռուսական կառավարությունը վերականգնեց հայ վաճառականների իրավունքը Ռուսաստանի վրայով Արևմտյան Եվրոպայի հետ առևտուր անելու վերաբերյալ[20]։ Վկայելով այդ մասին, ֆրանսիացի Տուրնֆորը գրում էր. «Նրանք (հայ վաճառականները—Վ. Բ.) գալիս են Պարսկաստանի խորքերից և հաստատվում են Լիվոռնոյում։ Ոչ շատ վաղուց հիմնավորվեցին Մարսելում։ Որքա՞ն մարդ է նրանցից գտնվում Հոլանդիայում և Անգլիայում»[21]։

Եվրոպական հզոր առևտրական ընկերությունների կողմից հարուցվող մրցակցային դաժան պայքարին դիմանալու համար հայ վաճառականները ստիպված էին դրսևորել մեծ ճկունություն։ Նրանք պետք է յուրացնեին Եվրոպայում գոյություն ունեցող առևտրի ձևերը, հարկադրված էին նաև սովորել լեզուներ, ուսումնասիրել տեղական կենցաղն ու սովորույթները, բանկային ու վարկատվական փոխատվության ձևերը, ծանոթանալ Եվրոպայի շուկայական

---

[16] G. Clark. The Barbary Corsairse in the 17 century.—Cambridge Historical Journal, V. 8,1944, no. 1, p. 26.

[17] Տե՛ս, օրինակ, Զաքարիա Ագուլեցի. Օրագրություն. Երևան, 1938, էջ 51։

[18] Ю. Г. Барсегов. Дело королевского пирата Кидда.—Историко-филологический журнал, 1986, № 3, с. 189.

[19] Տե՛ս Ա. Սարուխան. Հոլանդիան և հայերը ԺԶ—ԺԲ դարերում. Վիեննա, 1926, էջ 56, 57։

[20] В. А. Байбуртян. Армянская колония Новой Джульфы (роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях). Ереван, 1969, с. 109.

[21] Pitton de Tournefort. Op. cit., Lettre 20, p. 158.

նոնյուկտուրային, այդ շուկաներում արևելյան ապրանքների պահանջարկին, համագործակցության մեջ մտնել եվրոպական առևտրական ընկերությունների ու վարկավորող հաստատությունների հետ և, վերջապես, կապեր հաստատել եվրոպական պետությունների կառավարող շրջանների հետ։ Հայտնի է, օրինակ, որ 1696 թ. Ինովկենտիոս XII պապը ջուղայեցի հարուստ վաճառականական ընտանիքներից մեկին՝ Շահրիմանյաններին շնորհեց Հռոմի քաղաքացու պատվավոր կոչում, որը նրանց իրավունք էր տալիս ազատ առևտուր անելու Հռոմում և Անկոնայում[22]։ Իսկ 1699 թ. Ավստրիայի կայսր Լեոպոլդ I Հաբսբուրգը Շահրիմանյան ընտանիքին շնորհեց մի պարգևագիր, որով նրանց ճանաչեց որպես Ավստրիայի ազնվականության դասակից ու հավասար և նրանց ողջ գերդաստանին շնորհեց կոմսության տիտղոս[23]։

Իրանում և Թուրքիայում անձի և գույքի անապահովության պայմաններում հայ վաճառականները սովորաբար իրենց դրամները պահում էին եվրոպական բանկերում, որը հեշտացնում էր նրանց առևտրական գործառնությունների ծավալումը։ Հայտնի է, օրինակ, որ հայ վաճառականները դրամական խոշոր ավանդներ ունեին Վենետիկի «Banco Dolfin» հայտնի դրամատանը[24]։ Իսկ Մարգար Շահրիմանյանը նույն քաղաքի «Ս. Մարկոս» կոչված բանկում ուներ 700 հազար դուկատ գումարով ավանդ[25]։ Առհասարակ Շահրիմանյան ընտանիքը Եվրոպա էր տեղափոխել երկու միլիոն դուկատ[26]։

Եվրոպայում հայ վաճառականների վաղեմի առևտրական պարտնյորներ են հանդիսացել Իտալիայի քաղաք-հանրապետությունները և առաջին հերթին՝ Վենետիկի հանրապետությունը։ XVII դարը հանդիսանում էր իտալական պետությունների տնտեսության ու քաղաքական ազդեցության անկման դարաշրջան։ Լևանտի հետ միջնորդ առևտուրը անշեղորեն կրճատվում էր և վաճառականների մեծ մասը վեր էր ածվում հողագործների։ Դեռևս XVI դարում թուրքերը Վենետիկից զսպեցին նրա հունական տիրույթները, որը հանգեցրեց Արևելքի հետ նրա առևտրի կտրուկ կրճատմանը։ Այս պարագաներում Վենետիկի համար կենսական անհրաժեշտություն էր հայ վաճառականների հետ համագործակցությունը, որը նրան հնարավորություն էր տալիս ձեռք բերել արևելյան ապրանքներ և հումք (հատկապես հում մետաքս), ինչպես նաև ինչ-որ չափով դիմակայել իր հզոր առևտրական ախոյանների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Հոլանդիայի մրցակցությանը[27]։ Անգլիացիները ստիպված էին խոստովանել, որ «վենետիկցիների և հայերի միջև առևտուրը ամբողջապես խափանելը անհնարին է»[28]։

Վենետիկի հանրապետության սենատը, ելնելով վերոհիշյալ նկատառումներից, բազմաթիվ արտոնություններ և իրավունքներ էր շնորհում հայ վաճառականներին, պարբերաբար իշեցնելով նաև նրանցից գանձվող մաքսատուրքերը[29]։ 1640 թ. ապրիլի 24-ի սենատի նիստի արձանագրության մեջ, օրինակ,

---

22 Մ. Ուղուրլյան. Պատմություն հայոց գաղթականության և շինության եկեղեցվո նոցա ի Լիվոռնո քաղաքի. Վենետիկ, 1891, էջ 211։

23 Նույն տեղում, էջ 299—307։ Տե՛ս նաև A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17 and 18 centuries. Vol. I, London, 1939, p. 485. vol. 2, p. 1358.

24 Ղ. Ալիշան. Հայ-Վենետ, էջ 371։

25 Հ. Տեր-Հովհաննյանց. Պատմություն Նոր Ջուղայի. հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 110—115։

26 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 207։

27 Э. Шахмалиев. Об англо-испанских противоречиях на Переднем Востоке в 80—90-х гг. XVI и первой четверти XVII в.—Ученые записки Азербайджанского Гос. университета, гуманитарная серия, 1958, № 1, с. 124.

28 Հ. Հակոբյան. Ուղեգրություններ. հ. Ա, Երևան, 1932, էջ 411։

29 G. Berchet. Op. cit, p. 67. Ղ. Ալիշան. Հայ-Վենետ, էջ 431, 464—465,

ասվում էր, որ «այդ ազգին հովանավորելը մեծապես օգտավետ է մեզ, քանի որ հայ վաճառականները զբաղվում են մեծ առևտրով և Վենետիկ են ներմուծում ամենաբազմապիսի արևելյան ապրանքներ, որոնց մեջ ամենաարժեքավորը հում մետաքսն է»[30]։ Մեկ այլ փաստաթղթում, որը թվագրված է 1651 թ., վենետիկյան իշխանությունները հայտարարում էին. «Ներկայումս արժե միայն խրախուսել հայերի առևտուրը, նրանց տրամադրելով ամենալայն առանձնաշնորհումներ»[31]։ Վենետիկի արքունի դիվանի այլևայլ հիշատակությունների մեջ ծերակույտի կողմից հայ ազգը անվանվում է «բարյացապաշտ», «սիրելագույն», «հաճոյական», «օգտակար», «միշտ շահավոր» և այլն։ Ի նշան համակրության, Վենետիկի ծերակույտի կողմից շնորհված էր հրաման, որ հայերը համարձակ կարող են իրենց ապրանքները վաճառել Ս. Մարկոսի հրապարակում, առանց որևէ հարկ վճարելու[32]։

Մինչև իրանահայ վաճառականների անմիջական այցելությունները Վենետիկ, «Ադրիատիկի մարգարիտը» կոչված այս վաճառաշահ քաղաքի հետ աշխույժ առևտուր ունեին Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի հայ խոշոր վաճառական-խոջաները։ Սակայն ամենակարճ ժամկետում արևելահայ վաճառականները, հատկապես ջուղայեցիները, կարողացան Վենետիկի հետ կատարվող առևտրի մեծագույն մասը կենտրոնացնել իրենց ձեռքում և մրցակցային պայքարում կամ դուրս մղել իրենց արևմտահայ մրցակիցներին և կամ ստիպել նրանց շահավետ պայմաններով համագործակցել իրենց հետ։

XVII դարի սկզբներից հայերի առևտուրը Վենետիկի հետ իսկական ծաղկում է ապրել։ Դա նաև տեղի գաղթօջախի մեծացման պատճառ է հանդիսացել։ XVI դարի երկրորդ կեսից ծայր է առնում հայ բնակչության նոր հոսանք դեպի Իտալիա։ Դրա պատճառը ոչ միայն թուրք-իրանական պատերազմներն էին, Հայաստանի անապահով վիճակը, տնտեսական կյանքի լճացումը, կողոպուտն ու գերեվարությունը, որոնք ստիպում էին հայ զանգվածներին լքել իրենց հայրենիքը և գաղթել ավելի ապահով վայրեր, այլև հայ առևտրական բուրժուազիայի արագ ձևավորումը, որն անմիջապես նետվում էր նոր շուկաներ որոնելու բուռն հորձանուտի մեջ։ Վենետիկում այնքան մեծ է եղել ջուղայեցի վաճառականների թիվը, որ Ս. Մարիամ Ֆորմոզայի եկեղեցու կից փողոցը կոչվել է «Ջուղայի փողոց»[33]։ Սիմեոն Լեհացին իր ուղեգրության մեջ (1612 թ.) Վենետիկում հիշում է հայկական քարաշեն եկեղեցի՝ իր հյուրանոցներով և հարակից այլ շենքերով[34]։ Այդ քաղաքում իրենց ներկայացուցիչներն են ունեցել Իրանի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռուսաստանի և այլ երկրների հայ խոշոր վաճառականական տները։

Վենետիկի հանրապետության և հայ խոջաների միջև առևտուրը առանձնակի վերելք էր ապրում պարբերաբար բռնկվող թուրք-վենետիկյան պատերազմների, մասնավորապես Կանդիայի 25-ամյա պատերազմի ժամանակ (1645—1669 թթ.)։ Ընդ որում հայ վաճառականների քաղաքական համակրանքը մշտապես եղել է Թուրքիայի հակառակորդի կողմը։ Հայտնի է օրինակ, որ Մարգար Շահրիմանյանը 1693 թ. 200 000 դուկատ գումարով փոխառություն էր հատկացրել Վենետիկի հանրապետությանը թուրքերի դեմ պատերազմ մղելու համար[35]։

Իտալական քաղաքներից Ջենովան ևս մինչև XVII դարի կեսերը կարևոր տեղ էր գրավում Արևելքի ու Եվրոպայի միջև միջնորդ առևտրում։ Հանդիսանալով Վենետիկի մրցակիցը, նա ամեն կերպ աշխատում էր հայ վաճառականներին գրավել իր կողմը, նրանց տրամադրելով լայն իրավունքներ և արտոնու-

---

30 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 215։

31 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 447։

32 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 216։

33 Նույն տեղում, էջ 214։

34 Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն.—«Հանդէս ամսօրեայ», 1934, № 3—4։

35 A Chronicle..., vol. 1, p. 438.

թյուններ։ 1623 թ. Ջենովան նույնիսկ ընդունեց հայ վաճառականների առաջարկը՝ համատեղ կազմակերպել «Արևելյան Հնդկաստանի առևտրական ընկերություն»՝ Հնդկաստանի և Իրանի հետ առևտուր անելու և իրանական հում մետաքսը անմիջականորեն Ջենովա ներմուծելու համար[36]։

Հայ խոջաները աչքի ընկնող առևտուր ունեին նաև Իտալիայի Լիվոռնո նավահանգստային քաղաքի հետ։ XVI դարի կեսից Լիվոռնոյում ստուգապես կար հայ գաղթականություն, որի մեծ մասը կազմում էին վաճառականները։ Հայերը առաջիններից էին, որ սկսել էին արևելյան ապրանքներ ներմուծել Տոսկանա[37]։ Լիվոռնոյի առևտրական նշանակությունը բարձրացնելու նպատակով Տոսկանայի մեծ հերցոգ Ֆերդինանդո I Մեդիչին 1593 թ. հունիսի 10-ին հրապարակում է մի հրամանագիր, որով նա բոլոր ազգերի վաճառականներին, այդ թվում նաև հայերին, հրավիրում էր «առանձին կամ ընտանյոք» հիմնավորվել Լիվոռնոյում կամ Պիզայում և զբաղվել Արևելքի հետ առևտրով։ 40 կետից բաղկացած հիշյալ հրամանագրով Ֆերդինանդո I-ը Լիվոռնո եկող վաճառականներին շնորհում էր զանազան արտոնություններ, առանձնաշնորհումներ, ազատություններ, ապահարկություն, ազատ առևտրի իրավունք, «ապահովություն շահեալ գումարաց վճարման. նեղումն և թոյլտուութիւն գործեալ յանցանացն, անկախութիւն ըստ իմիք ի դատաւորաց հրաման կազմելոյ առանձին հասարակութիւնս, և յերթևեկութեան վաճառականաց ուղևորական նպաստներ, և այլն և այլն»[38]։

Այս արտոնությունները հատկացնելուց հետո «յայնժամ բազմացան վաճառականք և կարաւանք Հայոց՝ յարևելքից Ասիոյ և ի Կիլանայ, ի Նուխոյ, ի Գանձակայ, և այլն, բառնալ մթերս անբաւ զուտ և անզուտ մետաքսի այլ և այլ որակաւ և տեսակաւ»[39]։

1671 թ. Լիվոռնոյում իրանական ավագ հյուպատոսի պաշտոն էր վարում Պետրոս անունով ղափանցի մի հայ[40]։ Սրան հաջորդեցին Գրիգոր Միրիմանը (Գրիգոր Գերաք) և իր ժառանգները, որոնք Կոզմաս III-ի ժամանակ ճանաչվեցին իշխանազուն տոհմ։ Նրանք առևտրական կապեր ունեին Մեդիչիների հետ։ Մեզ է հասել երկու մեդալ Գրիգոր Գերաքի դիմաքանդակով[41]։

1683 թ. հունիսի 17-ին հայ անվանի վաճառականների մի մեծ խումբ ստորագրում է «Առաջին դաշնագրություն հայոցը» Լիվոռնոյում եկեղեցի կառուցելու մասին «վասն ազգին մերոյ»[42]։

Այնքան շատ ջուղայեցիներ են հաստատված եղել Վենետիկ, Ջենովա և Լիվոռնո քաղաքներում, որ Ստեփանոս արքեպիսկոպոս Ջուղայեցին իր 1688 թ. մի գրությունը վերնագրել է՝ «Գիր օրհնութեան աստուածաշէն քաղաքացն Վենետիկ, Ալեկոռնոյ և Ջենովայ եղեալ քրիստոսասէր և բարեպաշտօն ջուղայեցի վաճառականաց, սիրելի և հարազատ եղբարց»[43]։ Պատահական չէ, որ հենց հայ վաճառականների դրամական հատկացումների շնորհիվ 1643—1702 թթ. ընթացքում Լիվոռնոն ակնառու տեղ է գրավել նաև հայ գրատպության մեջ[44]։

Իտալիայում հայ վաճառականները խոշոր առևտուր ունեին նաև Լուկկայի քաղաքային հանրապետության, Ֆերրարայի և Պյաչենցայի հերցոգությունների, Ֆաենցա, Անկոնա, Բոլոնիա, Պալմի, Ֆաբրիանա, Ֆորլի, Պիրուժ, Հռոմ, Նեապոլ, Միլան, Ֆլորենցիա, Պադուա, Տուրին, Բավիա, Պիստոյա, Սիեննա,

---

36 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 450 (ընկերությունը գոյություն ունեցավ մինչև XVII դարի կեսը, որից հետո վերացվեց)։

37 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 45։

38 Նույն տեղում, էջ 253—255։

39 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 455։

40 «Հանդէս ամսօրյայ», 1887, էջ 170 և հտ., էջ 194 և հտ.։

41 «Անահիտ», 1939, էջ 57 և հտ.։

42 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 256—257։

43 Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. հ. II, Կահիրե, 1955, էջ 450։

44 «Բաղմավեպ», 1937, էջ 229 և հտ.։

Վիտերբո, Էմիլիա և այլ քաղաքների հետ[45]։ Մեծ թվով հայեր էին հաստատվել Ռավեննա քաղաքին կից նավահանգստում, այդ պատճառով հաճախ Ռավեննան անվանվել է նաև «Արմեննիա»[46]։

Վերին աստիճանի ծավալուն էր նաև հայ վաճառականների առևտուրը Ֆրանսիայի հետ։ Ճիշտ է, այն հիմնականում կատարվում էր Լևանտում, որտեղ Ֆրանսիան, հենվելով XVI դարում օսմանյան սուլթաններից ստացած կապիտուլյացիաների վրա, ձեռք էր բերել կայուն դիրքեր[47], սակայն հայ վաճառականները Միջերկրական ծովով այցելում էին նաև բուն Ֆրանսիա։ Առհասարակ պետք է նշել, որ Ֆրանսիան մեծ հաջողությամբ կարողացավ օգտագործել միջերկրածովյան առևտրի ավանդույթները, իսկ Մարսելը հանդիսացավ դասական միջնադարի իտալական քաղաքների լևանտյան առևտրի ժառանգորդը[48]։ Մարսելի վրայով իրականացվում էր նաև առևտուրը Իսպանիայի, Իտալիայի և Աֆրիկայի հետ։

XVII դարում առևտրական խոշոր նշանակություն ձեռք բերեցին նաև Ատլանտյան ծովափի առևտրական քաղաքները, հատկապես Նանտը, Բորդոն, Լա-Ռոշելը, Դյեպպը և այլն։ Իսկ Ֆրանցիսկ I-ի ժամանակ հիմնադրված Հավրը ավելի ուշ դարձավ Ֆրանսիայի խոշորագույն նավահանգիստը[49]։

XVII դարում օվկիանոսային ճանապարհների վրա Ֆրանսիան չէր կարող հանդես գալ որպես Անգլիայի մրցակից, իսկ ցամաքային կարավանային առևտրով ֆրանսիական վաճառականները առհասարակ չէին զբաղվում։ Հետևաբար ֆրանսիական առևտրական բուրժուազիայի համար ևս կարևորագույն նշանակություն էր ձեռք բերում առևտրական համագործակցությունը հայ վաճառականների հետ։

Տեղեկություններ կան այն մասին, որ XVII դարի սկզբին հայ խոջաները փորձում էին ֆրանսիական թագավորից ձեռք բերել Ֆրանսիայի բոլոր մեծ քաղաքներում հաստատվելու իրավունք[50]։ Ստանալով այդպիսի իրավունքներ[51], կարճ ժամանակամիջոցի ընթացքում նրանք ծավալում են այն աստիճանի լայն առևտուր, որ դառնում են ֆրանսիայի վաճառականների լուրջ մրցակիցներ։ Այդ պատճառով 1622, 1634 և 1650 թթ. ընդունած հրամանագրերով ֆրանսիական իշխանությունները պարբերաբար սկսում են սահմանափակել իրենց առևտրական ախոյանների գործունեությունը։ Բանը հասնում է նույնիսկ նրան, որ Մարսել և Տուլոն նավահանգիստները փակվում են հայ վաճառականների առջև[52]։ Ֆրանսիական իշխանությունների այդ քաղաքականության նպատակներից մեկն էր նաև Թուրքիային տնտեսական հարված հասցնելը, որովհետև Լյուդովիկոս XIV-ի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկն էր Միջերկրական ծովը փակել թուրքերի առջև[53]։

Կարդինալ Ջուլիո Մազարինիի կառավարման շրջանը նշանավորվեց Լյուդովիկոս XIV-ի կառավարության կողմից նոր քաղաքական գծի մշակմամբ,

---

45 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 456։

46 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 228։

47 Paul Masson. Histoire du commerce français dans le Levant ou 17 siecle. Paris, 1890.

48 G. Tongas. Les relations de la France avec l'Empire Ottoman durant la Premiere moitié du 17 siecle. Toulouse, 1942, p. 199.

49 Ф. Я. Полянский. Экономическая история зарубежных стран (эпоха феодализма). М., 1954, с. 440.

50 Fr. Macler. Notes de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens, vus dans quelques bibliotéques de la peninsule iberique et du sud-est de la France.—Revue des Etudes Armeniennes, t. 2, fasc. 1, fol. 25, Paris, 1922.

51 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 457։

52 Fr. Macler. Op. cit.

53 H. Missac. Le Père Ottoman (1644—1676).—Revue d'Histoire Diplomatique. Paris, 17e année, 1903, p. 365.

որն ընթանում էր Ֆրանսիական բուրժուազիայի դիրքերի ամրապնդման կարգախոսի ներքո։ Այդ քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկն էր դիտվում նաև արևելյան վաճառականների նկատմամբ գոյություն ունեցող սահմանափակումների վերացումը[54]։ Այս շրջադարձը մասամբ պայմանավորված էր նրանով, որ Ֆրանսիայի մրցակիցները, մասնավորապես Հոլանդիան, ավելի ու ավելի էին իրենց կողմը գրավում արևելյան վաճառականների առևտուրը, որի հետևանքով Ֆրանսիայի արտադրությանն ու առևտրին հասցվում էին խոշոր վնասներ։ Անտվերպենն, օրինակ, կարողացավ զավթել հում մետաքսի առևտուրը՝ ֆրանսիական մետաքսի մանուֆակտուրաները համարյա զրկելով հումքից[55]։

Այս անցանկալի իրողությունը հարկադրեց Ֆրանսիային արևելյան վաճառականների նկատմամբ որդեգրած քաղաքականության բնագավառում կատարել կտրուկ շրջադարձ։ Կրկին խրախուսվեց նրանց առևտուրը Մարսելի հետ[56]։ Այդ քաղաքականությունը առանձնակի հետևողականությամբ իրագործվեց Կոլբերի կողմից, որը եռանդուն կերպով աշխատում էր, որ երկիրը իր մասնակցությունը բերի համաշխարհային առևտրին, զարկ տա արդյունաբերությանը և պայքարի մեջ մտնի վաճառականման շուկաների համար[57]։ Այդ առումով հատկապես կարևոր նշանակություն ունեցավ 1667 թ. Կոլբերի կողմից կազմած սակացուցակը («տարիֆ»), որն իրենից ներկայացնում էր ներմուծվող հումքի նկատմամբ հովանավորողական մաքսերի մի ամբողջ համակարգ[58]։ Արևելյան առևտրի բնագավառում Հոլանդիայի և Անգլիայի դեմ հաջողությամբ մրցակցելու համար 1664 թ. Կոլբերը ստեղծեց «Ֆրանսիական արևելա-հնդկական ընկերությունը», իսկ 1669 թ. կազմակերպեց «Լևանտյան ընկերությունը»[59]։ Այնուհետև 1669 թ. Մարսելը հայտարարվեց բաց նավահանգիստ («պորտո ֆրանկո»)[60]։ Այդ առթիվ Լյուդովիկոս XIV-ի և Կոլբերի հրապարակած էդիկտում ասվում էր, որ Մարսել եկող և այնտեղից մեկնող բոլոր նավերը ազատվում են ամեն տեսակի հարկերից և որ այդ նավահանգիստը այսուհետև հայտարարվում է ազատ ու մատչելի բոլոր վաճառականների ու բոլոր տեսակի ապրանքների համար[61]։

Այդ քայլի կարևորագույն դրդապատճառներից մեկը կայանում էր նրանում, որ Ֆրանսիայում եկել էին այն համոզման, որ իրենց արևելյան, մասնավորապես իրանական առևտրի հաջողությունը բացառապես կախված է հայ վաճառականների համագործակցությունից ու նրանց բարի կամեցողությունից[62]։ Այսպիսով, հայ վաճառականների առջև կրկին բացվեց Լևանտ-Ֆրանսիա առևտրական երթուղին։ Կոլբերը հայերին հատկացրեց այնպիսի արտոնություններ, որպիսիք «չուներ արևելյան ազգերից և ոչ մեկը»[63]։ Ինա-

---

[54] A. Aubery. Histoire du cardinal Mazarin. T. 3, Amsterdam, 1718, p. 333—339.

[55] E. Lavisse. Histoire de France depuis les origines jusqúa 'la Révolution. V. 5. Paris. 1911, 1er part, p. 270.

[56] H. Samuetian. Les Arméniens, en France depuis les origines, jusqúa nos jours, le Foyer 3-e année, no. 35, Paris. 1er Avril, 1930.

[57] Н. Н. Розенталь. История Европы в эпоху торгового капитализма. Л., 1927, с. 125.

[58] Р. Ю. Виппер. Четыре века европейской истории. М., 1924, с. 81, 82.

[59] N. Rocca. La France en Orient depuis les rois francs jusqúa nos jours: „Aperçu historique", Paris, Chalamel, 1876, p. 103.

[60] P. Clement. Histoire de la vie et de l'administration de Colbert. Paris, 1846 p. 352.

[61] Recueil des réglements généraux et particuliéres concernant les manufacture, et fabriques du Rogaume. T. 1, Paris, 1730, p. 183—189.

[62] Raphael du Mans. Estat de la Perse en 1660. Paris. 1890, appendice, XLV.

[63] Poullet. Nouvelles relattons du Levant. Paris, 1668, p. 436.

յան։ Նրան, որ նա իրականացնում էր մերկանտիլիզմի, պրոտեկցիոնիզմի և ակտիվ առևտրական հաշվեկշռի քաղաքականություն. սակայն հայ վաճառականների հետ փոխհարաբերություններում որպես կանոն ֆրանսիական մաքսային իշխանությունները հետամուտ չէին լինում այդ սկզբունքների անշեղ կենսագործմանը։ Բացի այդ, կարգադրվեց հայ վաճառականների կողմից սերված ապրանքների արժեքը վճարել միայն դրամով, այն դեպքում, երբ հոլանդացիներն ու անգլիացիները գերադասում էին վճարումները կատարել ապրանքների փոխանակության ձևով կամ անկանխիկ հաշվարկով, որը, բնականաբար, ձեռնտու չէր հայերին։ Հենց այդ պատճառով էլ վերջիններս սկսեցին նախապատվություն տալ ֆրանսիացիներին[64]։

Օգտվելով այս շեշտված բարյացակամ վերաբերմունքից, 1687 թ. հայ հոջաները թույլտվություն խնդրեցին Մարսելում և Բորդոյում բաց անելու սեփական առևտրական գրասենյակներ։ Ավելին, նրանք խնդրագիր ներկայացրին Ֆրանսիայում «Հնդկական ընկերություն» հիմնելու համար, որը մասնագիտանալու էր Հնդկաստանի, Չինաստանի, մերձավորարևելյան երկրների և Լեանտի հետ առևտրում։ Թեև ֆրանսիական վաճառականների ճնշման ներքո Լյուդովիկոս XIV-ը մերժեց այդ խնդրանքը[65], սակայն որպես փոխհատուցում հայերին թույլատրվեց Ֆրանսիայի հարավային նավահանգիստներում բաց անել առևտրական տներ[66]։

Կոլբերը սկսեց խրախուսել նաև Մարսելի հայ գրատպությունը, նկատի ունենալով, որ նախ դա կնպաստեր հայ վաճառականների առևտրի աշխուժացմանը այդ քաղաքի հետ և ապա՝ ֆրանսիական գանձարանը նշանակալից նկամուտներ կստանար գրքի առևտրից, որովհետև հայկական գրքերը սովորաբար լավ սպառում էին գտնում Արևելքում[67]։ Օգտվելով ընձեռնված հնարավորություններից, 1669 թ. մայիսի 6-ին Ոսկան Երևանցին լատիներեն լեզվով մի «աղերսանց» թուղթ է հղում Լյուդովիկոս XIV-ին, որով խնդրում էր բարեհաճել ընդունել 1666 թ. Ամստերդամում իր հրատարակած հայկական Աստվածաշնչի մի օրինակ։ Թագավորից ստացված 1669 թ. օգոստոսի 11-ի պատասխան նամակում հայտնվում էր, որ Երևանցուն շնորհված է Մարսելում, Լիոնում կամ տերության մեկ ուրիշ քաղաքում տպարան հիմնադրելու և հայերեն լեզվով ամեն տեսակի գրքեր հրատարակելու իրավունք[68]։ Վերոհիշյալ միջոցառումները առաջ էին բերում ֆրանսիական վաճառականների կատաղի հակազդեցությունը, որովհետև նրանք նախկինի պես հայերին համարում էին իրենց մրցակիցներ։ Ֆրանսիական գործարար շրջանները նույնիսկ չխորշեցին դիմել հռոմեական հավատաքննության օգնությանը, որի միջամտության հետևանքով տաս տարի գործելուց հետո 1683 թ. Մարսելի տպարանը փակվեց։

Ֆրանսիայի առևտրական բուրժուազիայի այդ պայքարը երկրի ազգային շահերի համար այն աստիճանի արտառոց էր, որ Փարիզը հրապարակորեն հանդես եկավ Մարսելի դեմ, որի վաճառականական դասը առավել անհաշտ դիրքավորում էր որդեգրել հայ խոջայության նկատմամբ։ Հայերի պաշտպանության օգտին հանդես եկան նաև փարիզյան հայտնի անձնավորություններ։ Ի վերջո, գործին միջամտեց նաև թագավորը՝ Լյուդովիկոս XIV-ը։ 1683 թ. հունվարի 3-ին և փետրվարի 5-ին Մարսելի իր պաշտոնակատար Մորանին նա ուղարկեց երկու հրամանագրեր տպարանի իրավունքները լիովին վերականգնելու մասին[69]։

---

64 Ա. Ալպոյաճյան. նշվ. աշխ., էջ 175։

65 Հայկ Տեր-Աստվածատրյան. Հայ վաճառականությունը Ռուսիայում. Պարիզ, 1908, էջ 47։

66 Ա. Ալպոյաճյան. նշվ. աշխ., էջ 200։

67 Fr. Macler. Mosaiques orientales. Paris, 1907, p. 62.

68 Հայկական տպարան ի Մարսիլ.—«Բազմավեպ», 1891, հ. ԽԹ, հունիս, էջ 163։

69 Հ. Անասյան. XVII դ. ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961, էջ 190—193։

Հայ-ֆրանսիական առևտրական հարաբերությունները նոր մղում ու թափ սաացան XVII դարի վերջին։ Դա մասամբ հետևանք էր այն բանի, որ 1693 թ. Զմյուռնիայի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտում ֆրանսիացիները շախջախիչ պարտության մատնեցին Անգլիային ու Հոլանդիային։ Լեվանտում գործող այս երկու պետությունների առևտրական նավատորմիղը խորտակվեց և նշանակալիորեն տկարացավ։ Այսուհետև միառժամանակ արևելյան միջերկրածովյան ավազանում դրության տերը դառնում էին ֆրանսիացիները։ Անտարակույս, այս հանգամանքը դրական ներգործություն էր ունենալու հայ-ֆրանսիական առևտրատնտեսական հարաբերությունների վրա, որը հաջողությամբ շարունակվեց նաև հաջորդ՝ XVIII դարում։

Արևմտյան Եվրոպայում միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականների խոշորագույն առևտրական պարտնյորներից մեկն էր նաև Հոլանդիան, որը Եվրոպայում առաջին երկիրն էր, որտեղ իրագործվեց հաղթական բուրժուական հեղափոխություն և ստեղծվեց պատմության մեջ առաջին բուրժուական հանրապետությունը։ Հեղափոխությունից հետո ընդամենը մի քանի տասնամյակում Հոլանդիան իր զարդացմամբ առաջ անցավ եվրոպական մյուս պետություններից։ Այստեղ հատկապես նկատվում էր վաճառականական կապիտալի արագ զարգացում։

Հոլանդիայի և Ֆլանդրիայի (Բելգիա) Ամստեռդամ և Բրյուժ (Բրյուգգե) քաղաքներում հայ վաճառականները հաստատվել են դեռ շատ վաղ ժամանակներից[70]։ XVI դարում հայերի գալուստը Ամստերդամ առաջին անգամ հիշատակվում է 1560—1565 թթ.։ Նրանք այդ քաղաքն էին այցելել իրենց բերած մարգարիտներն ու ադամանդները վաճառելու և տեղում հոլանդական ապրանքներ ձեռք բերելու և Լևանտի նավահանգիստները արտահանելու համար[71]։ XVII դարի սկզբներից հայերը սկսում են կանոնավոր երթևեկություն Ամստերդամի հետ, որն արդեն առաջատար տեղ էր գրավել համաշխարհային առևտրի մեջ։

Առաջին անգամ այդ քաղաքում հաստատվածները, բնականաբար, անծանոթ էին տեղական լեզվին, վարք ու բարքին և այլն, ուստի ստիպված էին միջնորդ-թարգմանի օգնության դիմել։ Այս դերը կատարել են նրանցից առաջ եկած մի քանի հրեաներ, որոնք տիրապետել են արևելյան լեզուների։ Բայց ահա քիչ ավելի ուշ նիդերլանդներ եկած հայ վաճառականների մասին հոլանդացի պատմագիրներից մեկը վկայում է, թե «նրանց մեծ մասը կրթված մարդիկ էին և իրենց մայրենի լեզու հայերենից զատ խոսում էին նաև իտալերեն և ֆրանսերեն։ Սրանք այս լեզուներով էին գործ տեսնում հոլանդացիների հետ»[72]։

Հենվելով Ամստերդամի քաղաքային արխիվների փաստաթղթերի վրա, Հոլանդիայի հայ գաղութի պատմությունն ուսումնասիրած Առաքել Սարուխանը տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ 1617 թ. սկսած հայ վաճառականները Ամստերդամի քաղաքային բորսայում կատարում էին խոշոր առևտրական գործարքներ։ Այդ քաղաքում նրանք ունեցել են նաև իրենց հատուկ շուկան, որը կոչվել է «Արևելյան շուկա» (Qoster market)[73]։ Հայ վաճառականները հոլանդացիների հետ կազմել են նաև փայատիրական սկզբունքների վրա հիմնված առևտրական ընկերություններ։ Նրանք ունեցել են նաև զուտ հայկական առևտրական տներ, որոնց թիվը միայն Ամստերդամում 1660-ական թթ. հասնում էր 60-ի[74]։ Հոլանդիայում հայերի առևտրի ծավալ-

---

70 Առաքել Սարուխան. Հոլանդիան և հայերը ԺԶ—ԺԹ դարերում. Վիեննա, 1926, էջ 10, 11։

71 Նույն տեղում, էջ 45, 46։

72 Նույն տեղում, էջ 50, 51։

73 Նույն տեղում, էջ 47, 48։

74 Fr. Macler. Quatre Conferences sur l'Arménie et les Arméniens Faites en Hollande. Paris, 1932, p. 251.

ոանը մեծապես նպաստել է այն, որ նրանք այդ երկրում վայելել են թե՛ առևտրական և թե՛ կրոնական ազատություն։ Մինչ տեղական իշխանությունները հայերից առաջ Ամստերդամ եկած հրեաներին մերժում էին «Ամստերդամի բաղաքացիության» իրավունքը, հայերին իսկույն շնորհվում են այդ կոչումն ու դրա հետ կապված իրավունքները[75]։

Հայ-հոլանդական առևտրի այս աշխուժացման շրջանում մեծանում է նաև Ամստերդամի հայ գաղթօջախը։ Այն վաճառականները, որոնք այստեղ հաջողություն էին ունենում, բերում էին իրենց ընտանիքները և մշտական բնակություն հաստատում։

Հոլանդական իշխանությունների այս բարյացակամ վերաբերմունքը հայ վաճառականների նկատմամբ պետք է բացատրել նրանով, որ նախ իսպանական լծից ազատագրվելուց հետո (1603 թ. Իսպանիան դե-ֆակտո ճանաչեց Հոլանդիայի հանրապետության անկախությունը) Նիդերլանդները սկսել էին բուռն զարգացում ապրել։ Նրա մանուֆակտուրաները, որոնք կտորեղեն էին մատակարարում համարյա բոլոր եվրոպական երկրներին, կարիք ունեին մեծ քանակությամբ հումքի (մետաքս, բուրդ, բամբակ, ներկեր և այլն), որոնց մի զգալի մասը Հոլանդիան ձեռք էր բերում հայ և հույն վաճառականներից[76]։ Այնուհետև, Հոլանդիայի հետ առևտուր անող հայ վաճառականները իրականացնում էին նաև Նիդերլանդների ու եվրոպական մյուս երկրների միջև լայն առևտրափոխանակություն, որը նպաստավոր էր Հոլանդիայի պետական գանձարանի համար։ Իտալիայի Լիվոռնո քաղաքի թանգարանում հայտնաբերված է 1627 թ. նոյեմբերի 21 թվակիր, հոլանդերեն գրված մի պայմանագիր, որտեղ ասվում է, որ Ամստերդամի վեց հայ վաճառական պայմանավորվում են Ժան Ստիին անունով հոլանդացի մի նավապետի հետ, որ սա Ամստերդամից նրանց ապրանքը տեղափոխի Լիվոռնո։ Փաստաթղթում ստորագրությունների տեղ դրված են վաճառականների անվանական կնիքները, որոնց վրա կարդացվում են՝ Սարհադ, Զաքար, Օհան, Մարկոս, Պետրոս և Հովակիմ[77]։

Վենետիկում, Լիվոռնոյում, Մարսելում, Իսպանիայի քաղաքներում և այլուր գտնվող հայ վաճառականների առևտրական տները կամ նրանց ճյուղերը Հոլանդիայից ստանում էին կամ այդ երկիրն էին ուղարկում մեծ քանակությամբ ապրանքներ։ Այլ կերպ ասած, Նիդերլանդները հայ վաճառականների համար հանդիսանում էին նաև փոխբեռնման հենակետ ողջ եվրոպական առևտրի համար։ Այստեղից խոջաները նավերով ապրանքներ էին առաքում նաև դեպի հյուսիս, բալթյան ծովեզրյա քաղաքներն ու այնտեղից ստանում էին ուրիշ ապրանքներ, առանձնապես սաթ, որը մեծ հարգ ուներ Զմյուռնիայի շուկայում[78]։

Հայ-հոլանդական առևտրական կապիտալի համագործակցությունը առավել լայն չափեր ձեռք բերեց XVII դարի 30-ական թթ. սկսած[79]։ Նախ դա պայմանավորված էր նրանով, որ 1623 թ. «Հոլանդական արևելա-հնդկական ընկերությունը» Իրանի հետ կնքեց առևտրական պայմանագիր, որն անշուշտ մեծապես խթանելու էր նաև Նիդերլանդների հետ իրանահայ վաճառականների առևտուրը, որոնք այդ ժամանակ ըստ էության իրենց ձեռքում էին կենտրոնացրել Սեֆյան պետության արտաքին առևտրի մենաշնորհը։ Վերջապես, հայ-հոլանդական առևտրական հարաբերությունների ծավալման համար

---

[75] Ա. Սարուխան. Նշվ. աշխ., էջ 147։

[76] H. Watjen. Die Niederländer im Mittelmeergebiet zur Zeit ihrer höchsten Machtstellung Abhande Z. Verkehrs und Seegeschichte. Bd. 2, Berlin, 1909, s. 134.

[77] Bronnen tot de geschiedenis van den Levantschen Handel, 1590—1660. Dr. K. Heeringa. S'Gravenhage, 1910, s. 96. (մեջբերված է ըստ՝ Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 9)։

[78] Ա. Սարուխան. Նշվ. աշխ., էջ 55։

[79] H. Dunlop. Source pour servir a l'histoire de la compagnie des Indes Orientales et la Hay. 1930, p. 74.

կարևոր նշանակություն ունեցավ առհասարակ Մերձավոր Արևելքում Նիդերլանդների քաղաքականության ակտիվացման մեծացումը։ Հենվելով 1598 և 1612 թթ. Օսմանյան կայսրության հետ կնքած կապիտուլյացիաների վրա, Հոլանդիան Մերձավոր Արևելքում աստիճանաբար ընդարձակում էր իր առևտուրը։ 1617 թ. Միջերկրական ծովում հայտնվեց հոլանդական ռազմական նավատորմը, առաջին նավատորմը մի պետության, որը տեղավորված չէր միջերկրածովյան ավազանում[80]։ Բոլորովին իզուր անգլիական դեսպանը կոչ էր անում սուլթանին «աջակցել հին բարեկամներին, փոխանակ փնտրելու նորերը»։

1625 թ. Ամստերդամում ստեղծվել էր մի հատուկ հաստատություն՝ «Մերձավոր Արևելքի առևտրի և Միջերկրական ծովում նավագնացության վարչություն» անունով, որի խնդիրն էր աշխուժ կերպով հսկել Միջերկրական ծովում կատարվող միջազգային կապերի վրա և իրականացնել առևտուրը Մերձավոր Արևելքի երկրների հետ[81]։ Արդեն XVII դարի կեսերին Հոլանդիան դարձավ կենտրոնական և հյուսիսային Եվրոպայի ապրանքների հիմնական մատակարարողը Լևանտի շուկաներին[82]։ Միաժամանակ հոլանդական նավերի էժան նավափոխադրավարձը նպաստում էր նրանց ավելի լայն օգտագործմանը արևելյան միջերկրածովյան շրջանում։ Բանը հասնում էր նույնիսկ նրան, որ երբեմն լևանտյան ապրանքները Լոնդոն էին բերվում հոլանդական նավերով[83]։ Այս բոլորի հետևանքով XVII դարի կեսին լևանտյան առևտրում Անգլիայից հետո Հոլանդիան դուրս եկավ երկրորդ տեղը։

Հոլանդացիները հակված էին համագործակցել հայ վաճառականների հետ ոչ միայն արևելյան ապրանքներ ձեռք բերելու, այլև իրենց մրցակիցների՝ անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ հաջողությամբ պայքարելու համար։ Նիդերլանդները խիստ շահագրգռված էին հայ վաճառականների եվրոպական առևտրով նաև այն պատճառով, որ նրանք իրենց ապրանքները լևանտյան նավահանգիստներից Միջերկրական ծովով եվրոպական երկրներ էին տեղափոխում առավելապես հոլանդական նավերով։ Ուշագրավ տեղեկություններ կան նաև այն մասին, որ հայերն ունեցել են նավեր, որոնք երթևեկել են Լևանտի և Նիդերլանդական նավահանգիստների միջև հոլանդական դրոշի ներքո[84]։

Ինչպես հայտնի է, անգլո-հոլանդական մրցակցությունը համաշխարհային ծովային ուղիների վրա XVII դարի կեսերին հանգեցրեց պատերազմի, որն ավարտվեց Հոլանդիայի պարտությամբ։ Նիդերլանդների ռազմական և քաղաքական հզորությունը թուլացավ, նրանք կորցրին մի շարք գաղութներ և դուրս մղվեցին ծովային առևտրից։ Սահմանափակվեց նաև նրանց առևտուրը Մերձավոր Արևելքի երկրների հետ։ Բնական է, որ այդ պայմաններում Հոլանդիայի համար կենսական նշանակություն էր ձեռք բերում համագործակցությունը հայ վաճառականների հետ։ Պատահական չէ, որ ողջ XVII դարի երկրորդ կեսի ընթացքում Նիդերլանդների կառավարությունը պարբերաբար արտոնություններ էր հատկացնում հայ վաճառականներին[85]։

Իրենց ապրանքների վաճառքի համար շահավետ շուկաներ ձեռք բերելու որոնումների ժամանակ հայ վաճառականները Միջերկրական ծովի ճանապարհով թափանցում էին նաև Արևմտյան Եվրոպայի այլ երկրներ՝ Իսպա-

---

80 P. Pringle. Jolly Roger. New York, 1953, p. 55.

81 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 14։

82 H. Gastries. Les sources inedites de l'histoire du Maroc. T. 3, Paris, 1912, p. 40.

83 W. Monson. The Naval Tracts. London, 1902—1914, v. 3, p. 443.

84 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 56—57։

85 Kr. Glamann. Dutch-Asiatic trade 1620—1770. Copenhagen—The Hague, 1958.

նիա, Պորտուգալիա, Անգլիա, Գերմանիա, Դանիա, սկանդինավյան երկրներ և այլն[86]։

Հայ վաճառականների կողմից Եվրոպա արտահանվող ապրանքների տեսականին չափազանց հարուստ էր։ Իհարկե, առաջնությունը պատկանում էր հում մետաքսին։ Բայց և կարևոր տեղ էին գրավում նաև հետևյալ ապրանքները. ուղտի, ոչխարի և այծի բուրդ, դամասկոսյան դիպակներ, գոհարեղեն, զանազան համեմունքներ, մոմեր, մետաքսյա և բրդյա կտորեղեն, զառնավուխտ, թավիշ, գխտոր, խաշնդեղ, բուսախեժ, գորգեր, կաշվեղեն (մասնավորապես շագրենի), հաշիշ, պիստակ, սաֆյան, լեղակ, մորթեղեն, հնդկական մուշկ, բամբակ, մեղրամոմ, մարգարիտ, մարջան, օծանելիքներ, գինի, լաջվարդ, արդանաներկ, ինդիգո, դժոխաքար, համպար, խունկ, չորացրած և աղած ձուկ, ոսկի և արծաթ, արմավ, ծխախոտ, պաղլեղ, շաքար, զաֆրան, խավարծիլ, մեղր, բրինձ, անուշադր և այլ բազմապիսի ապրանքներ[87]։ Տեղեկություններ կան նաև, որ սուրճի գործածությունը Եվրոպայում տարածել են առաջին հերթին հայ վաճառականները[88]։

Եվրոպական այլևայլ երկրներից հայ խոջաները Արևելք են ներմուծել գլխավորապես հոլանդական, անգլիական, գերմանական, ֆրանսիական մահուդ, թավիշ, բրդյա կտորներ, մետաքսե գունազարդ գործվածքեղեն (կամկա), բաֆթա, զմուռս, սնդիկ, սաթ, արջասպ, խրուկաներկ, զանազան կահկարասիք, զենք, ասեղներ, երկաթյա ապրանքներ, կապար, խաղաթղթեր, զանազան զարդեր, ապակի, թուղթ, բուստ, վենետիկյան հայելիներ, կտավ, ներկեր, ժանյակներ, կաշվե իրեր, ժամացույցներ, մկրատներ, դանակներ, օճառ, ակնոցներ, արհեստական մարգարիտ, ուլունքներ, պերճանքի առարկաներ և եվրոպական արտադրության այլ բազմապիսի ապրանքներ[89]։

Անգլիացի ճանապարհորդ Կիր Պորտերը նշում է, որ հայ վաճառականները հանդիսանում էին Եվրոպայի և Ասիայի միջև ոսկու և թանկարժեք ապրանքների տեղափոխման լավագույն միջնորդներ։ Եվրոպայից բերած ոսկե դրամները վերադրոշմելով իրանական դրամի, ջուղայեցի վաճառականներն, օրինակ, ստանում էին հսկայական շահույթներ, որոնք կիսում էին Սեֆյան շահերի հետ։

Արևելքի երկրներում Եվրոպայի կապիտալիստական արտադրության բնագավառում ստեղծված նոր ապրանքների տարածման հետ մեկտեղ, չափազանց մեծ է եղել հայ վաճառականների դերը նաև Արևելքի տարբեր երկրներում եվրոպական մշակույթի արժեքների տարածման բնագավառում։ Հայտնի է, օրինակ, որ նրանց միջոցով են Արևելք թափանցել Եվրոպայում հրատարակված առաջին գրքերը, եվրոպական նկարչության, թատրոնի և արվեստի այլ բնագավառների նորույթները և այլն։

---

86 Տե՛ս, օրինակ, Ռ. Վ. Կյուլպենկյան. Հայ-պորտուգալական հարաբերություններ. Երևան, 1986։ R. Gulbenkian. Les relations entre l'Arménie et le Portugal du moyen age au 19 siècle.—Revue des études arméniennes, Paris, 1980, t. 14, p. 171—213; A History of Oriental Rugs before 1800. London, 1896; K. Bayany. Les relations de l'Iran avec l'Europe occidentale a l'epoque Safavide, Portugal, Espagn, Angleterre, Holland et France (avec le document inédit). Paris, 1937.

87 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8443, թ. 36—91։ Ղ. Ալիշան. Սիսական, էջ 445, 446։

88 Жаклин Пирен. Открытие Аравии, пять веков путешествий и исследований, М., 1970, с. 76.

89 Pitton de Tournefort. Op. cit., t. 2, Lettre 20, p. 159; J. B. Tavernier. Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. Paris, 1692, p. 47.

Այսպիսով, ուշ միջնադարում համաշխարհային առևտրի ընագավառում հանդես գալով որպես եռանգուն ու գործուն մասնակիցներ, հայ առևտրական-բուրժուազիան կարևոր դեր է խաղացել Միջերկրական ծովով իրագործվող Արևելք-Արևմուտք համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ։

СРЕДИЗЕМНОМОРСКИЙ ТОРГОВЫЙ ПУТЬ И ТОРГОВЛЯ АРМЯНСКИХ КУПЦОВ СО СТРАНАМИ ЗАПАДНОЙ ЕВРОПЫ В XVII ВЕКЕ

Доктор ист. наук В. А. БАЛБУРТЯН

Резюме

Несмотря на то, что после великих географических открытий торговые пути через Средиземное море переместились на Атлантический, Индийский, а потом и Тихий океаны, в результате чего Левант потерял свою торговую монополию, однако и в дальнейшем, в частности в период позднего средневековья, главные пути восточной торговли на Запад опять же проходили через Средиземное море. Это объясняется в первую очередь тем, что путь из любой европейской страны через Средиземное море на Ближний Восток был намного короче и безопаснее, чем через океан. Армянские купцы, занимающиеся в основном сухопутной караванной торговлей, в XVIII в. в обширных масштабах переключились также на морскую торговлю через Средиземное море, играя важную роль в международном обмене между Востоком и Западом.